« է սիրտն. ապա ժամ մի կու կենայ որ
« խելքն ի գլուխն գայ հոգեւորի. և ապա եր֊
« թեալ լուացվի, և եւանէ ի ջրոյն թօթափվի,
« և խելքն ի գլուխն գայ, յետոյ ի ջուրն
« մտանէ լուացվի և կենդանանայ. երթեալ
« կերակրի մանր զեռունք, ճանճ, սարդիոս֊
« տանս և կանանչ մարախ գտանէ՝ զայնոք
« ուտէ. և ապա կամաց կամաց երթայ իւրեն
« ի խոտանց բուն շինէ, որպէս փոքրիկ տա֊
« ղաւար մի, և անդ կիթ ածէ և ձագ հանէ,
« երեք կամ հինգ հատ ձագս, աւել և պակաս
« չի աներ: — Մարտ ամսուն կու գայ մինչեւ
« ի յունիս՝ Ըստամպօլու բոլորն, ի մէջ պար֊
« տիզաց և ջրարբու տեղացն բնակէ, ձագս
« հանէ և մեծացընէ, և ապա գօչէ, չուէ և
« երթայ՝ ուր Արարիչն միայն գիտէ որ ուր
« երթայ: — Տես զանչափ սէրն նորա հետ
« վարդին. որ նստի ի գիմացն որպէս ար֊
« բեալ, և 12 եղանակն հազար ցեղ արուես֊
« տիւ ձայնիւ երգէ, գլտողան ի սէր շարժէ:
« Եղեալ է, որ ի մէջ բուրաստանին սեղան
« եդեալ և նստեալ գինի ըմպէին և երգ
« նուագէին. և Պլպուլն եկեալ ի սեղանն՝
« վասն սիրոյ երգոյն ձայնիւ եղանակէր:
« Պլպուլն օրինակ է Գաբրիէլ հրեշտա֊
« կապետին, և Վարդն՝ Տիրամայր Ս. Ա֊
« տուածածնին: — Պլպուլն, յորժամ ուզես
« որ պահես ի մէջ ղաֆէսին, գլաղար նիհար
« միսն քերէ դանակով՝ ի վերայ անփուտ
« տախտակին, որ ջիլքն և եղն չի մնայ, և արա
« որպէս զմաճուն, և ապա ս՛ո զմակ եղ և
« մեղր և լէպլէպու ալուր, և հալվայ արա.
« ապա, խիստ եղով մի անես. ու եղն և
« մեղրն շատ մի աներ. յետոյ խառնէ զայն
« մաճուն եղած միսն և հալվան միատեղ,
« և կլորնի արա որպէս զտաքդեղ, և դիր
« ամանով մի մէջ ղաֆէսին, որ ուտէ: Եւ
« այլ. զհաւկիթն խորովէ որ պինդ լինի,
« յետոյ մանրէ և հալվայով խառնէ, տուր
« որ ուտէ: Եւ այլ. զմեռած հաւն կամ
« զճիկերն դիր որ հոտի և որդնի. և զայն
« որդն տուր, յորժամ որ զթեպուրն թափէ
« և նորոգէ. և յորժամ որ զթեպուրն թափել
« չկարէ և սընըրկի, շան լէշէն եղած որդն
« տուր որ ուտէ, և զթեպուրն խաղաղու֊
« թեամբ նորոգէ:

« Պլպուլին խմած ջրէն խմել տաս որ շատ
« քընի և աչքն չի կարեր բանալ, անքուն
« լինի, հանապազ արթուն կենայ: —
« Պլպուլն երկու ցեղ է. մէկն Ըռումի և մէկն
« Ցարապի. Ըռումին լաւ է քանց Արապըս֊
« տանին. զի ձայն անուշ ածէ և արուեստիւ
« եղանակէ»:

Զայնեղ, մանաւանդ թէ բազմաձայն եր֊
գահաւուց մէկն այլ է ժե ի կարգին, «Պօղ֊
« մաքըլ պագաչե Թուրքի բառով. այնոր այլ
« կերպարանքն Պայըրղուշուն (Արտուտի)
« նման է, բիչ մ՚այլ մեծ է, և վիզն սեւ
« նշան մի կայ որպէս ապըրճան, վասն այն
« Պօղմաքլի ասեն. անուշ ձայն կու երգէ
« որպէս զՊայըրղուշին: Թէ ուզես որ պահես
« մէջ ղաֆէսին, տակն աւազ լից. և զկե֊
« րակուրն որպէս զպայըրղուշին է. կորեկ այլ
« կ'ուտէ, ապա լաւն քօփթէն է» (մանրած
լոսած միս):

Մեր հանճարեղ Սարկաւագ վարդապետէ
երգաբանեալ Սարեկին այս հայ անունը չի
գիտեր Տէր Աբրահամ, այլ կոչէ, ժզ, «Ղա֊
« ռայ Գուշուշու, Թուրքի բառով. քան զՏա֊
« արակն կայ (ի՞նչ. մե՞ծ). գոյնն զեւ (սեւ) է,
« ոտլին և կտուցն դեղին է, անուշաձայն
« է, և քան զՊլպուլն առաւել բարձրաձայն
« է: Թէ ուզես պահել, ղաֆէսն քան զպըլ֊
« պուլին մեծ պիտի, և կերակուրն՝ Սեւ
« չամիչք ծեծէ, և կըպուի ղաֆէսն՝ որ
« այնպէս ուտէ: Եւ այլ՝ սարմաշըխին (Բա֊
« ղեղան) հունտ տուր և մուրվէրի պտուղ.
« և սողըճան այլ ուտէ և այլ ցեղ որդունք»:

Արտոյտին (ժդ) զոր Աբրահամ Պայղըր
ղուշի կոչէ, մէկ տեսակն այլ է, ժե Թուչ֊
ղար կոչածը, զոր՝ ոմանք զանազանելով
Արեղանճագ կոչեն. «Պայղըր ղուշուն նման
« է, և գլուխն փոքրիկ թագ մի կայ, անուշա֊
« ձայն է քան զնոսա. թէ ուզես պահել՝ որ֊
« պէս նոքա՝ այն այլ այնպէս պահէ»:

Յետ ձայնեղներուն դրուած է՝ Հայոց շատ
ծանօթ և շատ պիտանի թռչուն մի, մարա֊
խահալածն Տարմահաւ, զոր մեր Տէրտէրն
կոչէ (ժը) «Սըղըրճըք, Թուրքի բառով. քան
« զՂարայ գաւուխին չաք է, ալաճայ է, սեւ
« և սպիտակ խառն: Ասեն, թէ ի Հընդըս֊
« տանայ կու գայ, երբոր գայ՝ երամով կու